«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Մկրտչյան Աղունիկ Գուրգենի
ՄԱՐԶ	Շիրակի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Զորակապի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ……..…6

1.1. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդրին նվիրված տեսական մոտեցումների վերլուծությունը ……....6

1.2. Մայրենիի դասավանդման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի բաղադրատարրերը……...11

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ……15

2.1. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման միջոցների ուղղությամբ իրականացրած հետազոտական աշխատանքի բնութագրումը……...15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……...23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Մեր հասարակական կյանքում ընթացող քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև բարոյաարժեքային ոլորտում կատարվող փոփոխությունները նոր խնդիրներ են առաջադրում հանրակրթական դպրոցին՝ կապված աճող սերնդի կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման և արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտության հետ:

Կյանքի առաջանցիկ զարգացումները թելադրում են նոր պահանջներ և մոտեցումներ հանրակրթական առարկաների հատկապես մայրենիի, մաթեմատիկայի, բնագիտության, պատմության բովանդակության նորացման և դրանցմիջոցով սովորողներ արժեհամակարգի և ընդհանրապես արժեքային-գնահատողական վերաբերմունքի նկատմամբ: նկատմամբ Հանրակրթության դերն ու նշանակությունն արժևորվում են ոչ միայն աճող սերնդին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով ապահովման, այլնաշխարհի, մարդ-բնություն-հասարակություն փոխհարաբերությունների, մշակութային արժեքների նկատմամբ պատկերացումների և արժեքային կայուն կողմնորոշումների ու դիրքորոշումների ձևավորման տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցում սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ ներուժ ունեն մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, հասարակագիտություն, «Ես և շրջակա աշխարհը», կենսաբանություն, ֆիզիկա առարկաները: Մայրենիի, մաթեմատիկական, աշխարհագրական, էկոլոգիական, սոցիալական գիտելիքների տիրապետումը սովորողներին հնարավորություն է ընձեռում ոչ միայն մտքերն ու հույզերն արտահայտել, պատկերացում կազմել բնության և հասարակության մասին, այլև հաղորդակցվել այլ ժողովուրդների մշակույթին, յուրացնել մարդկության ստեղծած հոգևոր արժեքները:

Անձի արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդիրը դիտարկվել է մի շարք գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի, մաթեմատիկայի, էկոլոգիայի տեսանկյուններից:

Ուսուցման գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորման հոգեբանական, մանկավարժական տարբեր տեսանկյունները հետազոտվել են Ն. Տ. Աբրամովայի, Ի. Ս. Արտյուխովի, Լ. Ի. Բոժովիչի, Ս. Ս. Բուբնովայի, Ե. Վ. Բոնդարևսկայայի, Ն. Բ. Կռիլովայի, Մ. Ս. Կագանի, Վ. Ա. Սլաստյոնինի, Կ. Ռոջերսի, Վ. Վ. Շչերբայի, Լ.Թ.Ասատրյանի, Ռ.Ա. Մարդոյանի, Հ. Ս. Միքայելյանի, Լ. Վ. Թորգոմյանի, Ա. Լ. Տոնոյանի և այլոց կողմից:

Այնուհանդերձ, դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորմանը նվիրված հետազոտություններում հիմնականում դիտարկվել են այդ գործընթացի առանձին տեսանկյուններ՝ ուսումնասիրվող դասընթացների արժեքային բովանդակությունը, դաստիարակչական ներուժը և այլն: Սակայն այսօր, դեռևս, մնում է լիարժեք չբացահայտված մայրենիի, մաթեմատիկայի, հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն առարկաների արժեքային ներուժը՝ դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման տեսանկյունից:

Սրանով է պայմանավորված մեր հետազոտական աշխատանքի թեմայի ընտրությունը՝ **«Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը հանրակրթական դպրոցում մայրենիի /2-6-րդ դաս./ դասավանդման ընթացքում»**:

Հետազոտական աշխատանքի նպատակն է տեսականորեն հիմնավորել, մայրենիի արժեքային ներուժը և դրա դասավանդման գործընթացում դպրոցականների արժեքային համակարգի արդյունավետ ձևավորման միջոցները:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

1. Վերլուծել անձի արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականությունը, բնութագրել թեմային վերաբերող հիմնական հասկացությունները:
2. Տեսականորեն հիմնավորել մայրենիի ուսուցման գործընթացում դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման միջոցները:

Հետազոտական աշխատանքի խնդիրների լուծման համար օգտագործվել են մանկավարժական հետազոտության տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները՝ հիմնախնդրին վերաբերող փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գրականության, հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչների,

ծրագրերի վերլուծություն, դիտում, զրույց, հարցազրույց, անկետավորում, հարցում և ստացված տվյալների վերլուծություն:

Հետազոտական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը.

1. Վերլուծվել են հանրակրթական դպրոցում սովորողների արժեքային կողմնորոշումների և արժեհամակարգի ձևավորման վերաբերյալ գիտնականների հայեցակարգային մոտեցումները՝ ուսուցման համարժեք ձևերի, մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման, դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառման համատեքստում:
2. Փորձ է արվել հիմնավորվել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված մայրենիի արժեկողմնորոշիչ տեքստերի, ընթերցանության նյութերի և ուսումնական առաջադրանքների բովանդակության արժեկողմնորոշիչ ներուժը:
3. Մշակված տեսական մեթոդական նյութերը կարող են մեթոդական օգնություն լինել հանրակրթական դպրոցի ուսուցիչներին:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 24 էջ :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդրին նվիրված տեսական մոտեցումների վերլուծությունը

Վերջին շրջանում հայրենական և արտերկրյա գիտնականները մեծ ուշադրություն են դարձնում անձիարժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրին:

Փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական, գրականության վերլուծությունը թույլ է տալիս նկատել մեկ հիմնական մոտեցում՝ արժեքային համակարգի ձևավորվածության մակարդակով են պայմանավորված անձի դիրքորոշումները, աշխարհայացքը և ընդհանուր վերաբերմունքն իրականության նկատմամբ: Արժեքային համակարգը առաջատար դեր է խաղում անձի և հասարակության փոխհարաբերություններում՝ ընդգրկելով կյանքի հոգևոր և նյութական բոլոր ոլորտները: Սկզբնապես ձևավորվելով որպես սուբյեկտիվ գնահատման արդյունք՝ հետագայում արժեքները ձեռք են բերում համեմատաբար ինքնուրույն արտահայտություն:

Գիտական գրականության մեջ կան «արժեք», «արժեքային կողմնորոշումներ»հասկացությունների տարբեր մեկնաբանումներ:

Փիլիսոփայական տեսություններում (Վ. Ա. Բիբլեր, Բ. Մ. Բիմ-Բադ, Գ. Պ. Շչեդրովիցկի, Վ .Պ. Տուգարինով, Օ. Գ. Դրոբնիցկի, Վ. Մ. Ռոզին, Վ. Ա.Յադով) արժեքները սահմանվում են որպես գործունեության կարգավորիչներ, նորմատիվներ, արժեքներ-նորմեր, արժեքներ-իդեալներ, արժեքներ-նպատակներ, արժեքներ-միջոցներ:

Հոգեբանամանկավարժական գիտությունների տեսանկյունից արժեքն առնչվում է անձի ձևավորմանն ու դաստիարակությանը, վարքին ու գործունեությանը (Բ. Ի. Դոդոնով, Ա. Ա. Լեոնտև, Ա. Ն. Լեոնտև, Ն. Ա. Ռոզով, Ս. Լ.

Ռուբինշտեյն, Լ.Թ.Ասատրյան, Հ.Ս.Միքայելյան, Ռ.Ա.Մարդոյան, Լ.Վ.Թորգոմյան, Ա.Լ.Տոնոյան և այլք) :

Ըստ Է.Բ. Աղայանի՝ արժեքը մնայուն նշանակություն ունեցող գործ է, ստեղծագործություն, ավանդ, ներդրում, իրական հատկանիշ, արժանիք [1, էջ 132],իսկ ըստ Լ. Վ. Թորգոմյանի՝ «այն առարկա է, երևույթ, սոցիալական վարքի նորմ, որը կարող է ծառայել որևէ պահանջմունք բավարարելու համար» [5, էջ 53]:

Յուրաքանչյուր քաղաքակրթություն ունի իրեն հատուկ սոցիալական, բարոյական, էկոլոգիական, իրավական, գեղագիտական և այլ արժեքները, որոնք կողմնորոշում են անհատներին և կարգավորում նրանց վարքագիծը:

Ըստ Հ. Ս. Միքայելյանի՝ «Արժեքները շրջապատող աշխարհի օբյեկտների հատուկ սոցիալական որոշարկումներ են, որոնք բացահայտում են նրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար: Արտաքուստ արժեքը հանդես է գալիս որպես առարկայի կամ երևույթի հատկություն, սակայն հատուկ է օբյեկտին ոչ թե ի բնե, ոչ թե ինքնին վերցրած օբյեկտի ներքին կառուցվածքիի շնորհիվ, այլ որքանով այդ օբյեկտը ներքաշված է մարդու հասարակական կեցության ոլորտի մեջ և դարձել է որոշակի սոցիալական հարաբերությունների կրող» [9, էջ 41-42]:

«Արժեք» հասկացության էության բնորոշման տարբեր տեսակետներ կան: Վ. Ա. Սլաստենինը, Գ. Ի. Չիժակովան գտնում են, որ «արժենքները համարվում են մարդու գործունեության և վարքի կողմնորոշիչը, միայն այն դեպքում, երբ ամբողջականորեն ձևավորված են նրանց արժեքային կողմնորոշումների գիտակցումը, հարաբերությունները և դիրքորոշումները, որոնք արտացոլում են անձի գործունեության և վարքի մեջ արժեքների ուղղվածությունը, իսկ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում մարդը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և հարաբերություններով» [18, էջ 119]:

Պրոֆեսոր Լ. Թ. Ասատրյանը նշում է, որ. «վերջին ժամանակներս փորձեր են արվում հիմնավորելու, որ էկոլոգիական գիտելիքների ձեռքբերման ընթացքում ձևավորվում են սովորողների արժեքային կողմնորոշումները» [2, էջ 54]:

Ռուս հետազոտող Վ. Ա. Յադովի կարծիքով, արժեքային կողմնորոշումները ունեն իրենց կառուցվածքային բաղադրիչները: Այն ներառում է **ճանաչողական**

բաղադրիչը, որն արտացոլում է անձի սոցիալական փորձը, **հուզական բաղադրիչը** բնութագրում է անձի վերաբերմունքը արժեքների նկատմամբ, և բացահայտում այդ վերաբերմունքի բովանդակությունը: **Վարքային բաղադրիչը** պարունակում է կոնկրետ իրավիճակի գործողությունների պլանը[18]:

Արժեքները ներառում են անձի հասարակության կողմից ընդունված արժեքները, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն և արժեքային կարևոր գործառույթներ են իրականացնում, այսինքն՝ մեծ դեր են խաղում անձի կողմնորոշումների և վարքի ձևավորման ուղղությամբ:

Ռուս հոգեբան Դ. Ա. Լեոնտևը տարբերակում է անձնային և սոցիալական արժեքները[14]:

Անառակելի է, որ արժեքները և արժեքային կողմնորոշումները ձևավորվում են գիտելիքների ձեռք բերման, յուրացման և կիրառման գործընթացում: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, որ հանրակրթական դպրոցում Մայրենիի յուրաքանչյուր դաս պետք է նպատակաուղղված լինի սովորողների որոշակի արժեհամակարգի ձևավորմանը:

Հանրակրթական դպրոցի ուսուցման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը նաև սոցիալական նշանակություն ունեցող արժեքների յուրացման գործընթաց է, որը հարստացնում է նրանց հոգևոր աշխարհը և նպաստում է նրանց ամբողջական զարգացմանը:

Անձի արժեքային կողմնորոշումների բնութագրմանը նվիրված գրականության մեջ առանձնացվում են **անձնային, սոցիալական, գեղագիտական, էկոլոգիական արժեքները:** Հասարակության կողմից ընդունված արժեքների ճանաչումն ու գնահատումը աճող սերնդին ազգային ու համամարդկային մշակույթի յուրացման հնարավորություն է ընձեռում: Լ. Մ. Արխանգելսկին նշում է, որ մարդը սոցիալ-մշակութային միջավայրում կերտում է ինքն իրեն՝ այդ արժեքները դարձնելով իր հոգևոր ներաշխարհի անհրաժեշտ բաղկացուցիչները[12]:

Անձի արժեքային համակարգի կառուցվածքային բաղադրիչներ են համարվում արժեքային գիտակցությունը, արժեքային վարքը, արժեքային դիրքորոշումը, արժեքային ուղղվածությունը, արժեքային հարաբերությունը,

արժեքային վերաբերմունքը, ազգային և համամարդկային արժեքները:

Արժեքային դիրքորոշումը ըմբռնվում է որպես անձի որոշակի կենսադիրքորոշում, որին համապատասխան ձևավորվում ու իրականանում են նրա մտքերը, զգացմունքները:

Ռուս գիտնական Ն. Ս. Ռոզովը առանձնացրել է կրթության ոլորտի համար նշանակալի հետևյալ արժեքները.

- մարդասիրական արժեքներ, որոնք վերաբերվում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը,
- սոցիալական արժեքներ, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտում,
- մշակութային արժեքներ, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթինիկ ավանդույթներին,
- էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջապատող միջավայրին, կենսաբանական բազմազանությանը [16, էջ 162]:

Այս դասակարգման թերությունը այն է, որ իմացական արժեքները չեն առանձնացված:

Ս. Ի. Մասլովի կողմից առաջարկվող դասակարգման մեջ առանձնացվել են արժեքների հետևյալ խմբերը՝

- բարոյական,
- իմացական,
- կրոնական,
- գեղագիտական,
- սոցիալական,
- բարոյակամային,
- նյութական [15, էջ 88]:

Մենք հետևում ենք այս մոտեցմանը. այն ցույց է տալիս, թե ինչպիսի արժեքներ կարող են գերակայել հանրակրթական դպրոցում ուսումնասիրվող առարկաների ուսուցման գործընթացում, և որ արժեքներին են հաղորդակցվում

դպրոցականները:

Այսպիսով, ելնելով վերի կատարված դիտարկումներից՝ կարող ենք փաստել, որ հանրակրթական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը համամարդկային արժեքների յուրացման գործընթաց է, որը նպաստում է նրանց ազգային ինքնագիտակցության ձևավորմանը և իրականանում է մանկավարժական նպատակաուղղված ու հետևողական ներգործության արդյունքում:

Մայրենիի դասավանդումն ունի ինչպես դիդակտիկական, այնպես էլ դաստիարակչական կարևոր նշանակություն, քանի որ սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուսուցման գործընթացում իրականանում է երեք հիմնական ուղղություններով՝ **իմացական գործունեության ընթացքում, թեմատիկ նյութերի ուսումնասիրման, առաջադրանքների միջոցով՝ գիտելիքների յուրացման, կարողությունների ու հմտությունների տիրապետման գործընթացում**:

Անգնահատելի է մայրենիի դերը սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում, որովհետև այն առաջին հերթին նպաստում է անձի իմացական մտավոր, հոգևոր-բարոյական, հուզական ոլորտների զարգացմանն ու ձևավորմանը:

Մայրենիի առանձնահատկությունն այն է, որ նա հանդես է գալիս որպես այլ առարկաների ուսուցման հիմք և կարևոր դեր է կատարում սովորողների ստեղծագործական մտածողության, աշխարհաճանաչողության, արտաքին տեղեկատվության ընկալման և ընդհանուր զարգացման մեջ, ուստի արժեքային համակարգի ձևավորման յուրահատկությունը պայմանավորված է նրա արժեքային ներուժով:

Մայրենիի դասերին սովորողների կողմից արժեքների յուրացման և արժեքային համակարգի ձևավորման արդյունավետությունը կարող է ապահովվել միայն ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ, հատկապես փոխներգործուն մեթոդների, ուսուցման պրոբլեմային, նախագծային, համագործակցային, խաղային տեխնոլոգիաների:

1.2. Մայրենիի դասավանդման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի բաղադրատարրերը

Մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացի բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է այդ առարկայի դասավանդման առանձնահատկություններով:

Մեր հետազոտական աշխատանքի թեմայի տեսանկյունից մենք դիտարկել ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են գեղարվեստական, գիտահանրամատչելի տեքստերում, ժողովրդական բանահյուսությունում, արձակում, քնարերգություններում, մանրապատում ստեղծագործություններում՝ առած-ասացվածքներում, հանելուկներում, հեքիաթներում:

Մայրենիի ուսուցման գործընթացը նպաստում է սովորողների մեջ այնպիսի արժեքների ձևավորմանը, ինչպիսիք են՝ բարությունը, ճշմարտությունը, սերը, երախտագիտությունը, փոխօգնությունը. ազգային մշակույթի, պատմության վերաբերյալ գիտելիքները, ազգային ավանդույթները, սովորույթները, ծիսական և կրոնական տոները, որոնք սերնդեսերունդ են անցնում բանահյուսական նմուշների միջոցով և արտահայտում են ժողովրդի սոցիալական, բարոյական արժեքները:

Նշված արժեքների հիման վրա ձևավորվում են դպրոցականների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, տրամաբանությունը, նրանք հաղորդակցվում են ազգային ու համամարդկային հոգևոր արժեքներին:

Մայրենիի ուսուցման գործընթացում յուրացվող արժեքները կարելի է դիտարկել ըստ հետևյալ իմաստային խմբերի.

Իմացական-ճանաչողական արժեքներն ընդգրկում են ուսումնական տեղեկատվության արժեքային կողմի ընկալմանը: Մայրենիի ուսուցման գործընթացում այդպիսի տեղեկատվություն են պարունակում ուսումնական տեքստերը, վարժությունները, առաջադրանքները և այլն:

Սոցիալական արժեքները վերաբերում են հասարակական հարաբերություններին, բարեկիրթ հաղորդակցմանը, փոխշփումներին և այդ համատեքստում խոսքի մշակույթին:

Գեղագիտական արժեքներն անչվում են խոսքի գեղեցկության և ներդաշնա-

կության ընկալմանը, գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Բարոյական արժեքներն վերաբերում են մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների և իրադարձությունների արժեքային ընկալմանն ու գնահատմանը:

Սովորողների իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական և սոցիալական արժեքների ձևավորմանը, իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում:

Իմացական-ճանաչողական արժեքներն ընդգրկում են գիտելիքը, աշխարհճանաչողությունը, գրականության, ժողովրդական բանահյուսության, պատմության և մշակույթի իմացությունը, բնության խոր ճանաչողությունն ու բնության երևույթների ընկալումը, մարդու և բնության կապի արժևորումը, պատմամշակութային հուշարձանների ճանաչումը, նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության իմացությունը:

Սոցիալական արժեքներն ընդգրկում են փոխհարաբերությունները միջավայրում՝ փոխըմբռնումը ընտանիքում, դպրոցում, հասարակության մեջ, շփում ծնողների, հասակակիցների, դասընկերների, ուսուցիչների, մեծահասակների հետ, ընկերությունն ու բարեկամությունը բարձր գնահատելու և որպես արժեք գիտակցելու կարողությունը:

Բարձրագույն արժեքներ են ազգային խորհրդանիշների, ժողովրդական ավանդույթների, սովորույթների, բնության, պատմաճարտարապետական և մշակութային հուշարձանների ճանաչումն ու պահպանումը:

Խորհրդանիշը որևէ գաղափարի, կառույցի, հոգևոր կամ նյութական արժեքի խտացված արտահայտություն է, որն արտացոլում է տվյալ ժողովրդի ժառանգական հիշողությունը և ազգային ավանդույթները:

Արժեքային ներուժ ունեն հատկապես գեղարվեստական և գիտահանրամատչելի բնագրերը, որոնք նպաստում են արժեքների յուրացմանը գաղափարական բովանդակության, ոճական առանձնահատկությունների

շնորհիվ։

Հետազոտողների կողմից շեշտադրվում է արժեքային ներուժ ունեցող բնագրերի, գեղարվեստական ստեղծագործությունների՝ ուսումնական նպատակներով ուսումնասիրման անհրաժեշտությունը։

Հանրակրթական դպրոցում մայրենիի, հայ գրականության արժեկողմնորոշիչ տեքստերն ընտրելիս հաշվի է առնվում տվյալ ստեղծագործության կառուցվածքային և բովանդակային համապատասխանությունը կրթության բովանդակությանը, սովորողների հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկություններին, արժեքների ընկալման և գնահատման կարողություններին։

Մեր հետազոտական աշխատանքի շրջանակներում իրականացրել ենք բնագրային տեքստերի ընտրություն՝ ըստ դրանցում արտացոլված արժեքների։

Այսպես, օրինակ, մայրենիում տեղ գտած առակները, առած-ասացվածքները, հեքիաթները, պատմվածքները պարունակում են ընդունելի կամ մերժելի արժեքների ուղղակի գնահատում։ Դրանք ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ են, որոնք սովորաբար տրվում են որպես լրացուցիչ նյութեր, պարզաբանում են բնագրի այս կամ այն կողմը կամ խորացնում, ամբողջացնում են նրա միտքը։ Առած-ասացվածքներում արտացոլված են ժողովրդի կյանքը և մտածողությունը, պահանջմունքները, ձգտումները, սովորությունները։ Դրանց միջոցով ժողովուրդը քննադատել է մարդկային կյանքի հոռի երևույթները՝ չարն ու վատը, սովորեցրել է բարին ու լավը։

Քնարական պատմվածքներն ու բանաստեղծությունները զարգացնում են արժեքների հուզական ընկալման կարողությունը։ Այդ տեքստերն ունեն ներքին քնարականություն և երեխաների վրա ունենում են հուզական ներգործություն։

Գեղարվեստական խոսքն անփոխարինելի արժեք է և ունի ուսուցողական մեծ նշանակություն։ Գեղարվեստական ստեղծագործությունները դաստիարակում են հոգևոր բազմակողմանի հետաքրքրություններ, զարգացնում միտքը, զգացմունքը, ճաշակը, օգնում տարբերել բարին ու չարը, դրականն ու բացասականը, անկեղծորեն արձագանքել և համարժեք վերաբերմունք ցույց տալ։ Հատկապես տարրական և միջին դպրոցում, երբ դեռևս նոր է ձևավորվում

երեխայի բարոյական կերպարը, գեղարվեստական ստեղծագործությունների բարոյակրթիչ նշանակությունը չափազանց կարևոր է:

Գեղարվեստական բնագրերը ձևավորում են արժեքային համոզմունքներ և դրդապատճառներ: Օրինակ, 5-րդ դասարանի մայրինիի դասաժամերին արժեքների արտացոլումը այլաբանական ձևով մատչելի դարձնելու կրտսեր դպրոցականի հասկացողությանը և դրանց յուրացումը պահանջում է մանկավարժական ներգործություն, մեկնաբանում: Դա բնորոշ է հատկապես հեքիաթներին: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության այնպիսի նմուշներ են, որոնք իրենց լեզվամտածողությամբ, կենսափիլիսոփայական խտացումներով, բառապաշարով և ոճական առանձնահատկություններով հեշտությամբ են տպավորվում երեխաների հիշողության մեջև հուզական խոր ներգործություն ունեն: Դասագրքերում զետեղված կենդանական, հրաշապատում և իրապատում հեքիաթները յուրացման տեսանկյունից մատչելի են իրենց պարզությամբ և անմիջականությամբ: Հեքիաթներում իրականն ու երևակայականը, ճշմարտապատումն ու անիրականը մարմնավորում են այնպիսի արժեքներ, որոնք թեև այլաբանորեն են ներկայացվում, սակայն իմաստավորում են կենսական դեպքերի, երևույթների, իրադարձությունների կոնկրետ բովանդակությունը:

Գեղարվեստական տեքստի արժեքային կողմի յուրացմանն ուղղված վարժություններում և առաջադրանքներում արժեքները մարմնավորվում են պատկերավոր ձևով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցը կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում

Կրթության բովանդակությունը գիտելիքների, կարողությունների, հմտությունների այն ծավալն է, որը սահմանվում է ուսումնական ծրագրով, և որի յուրացումը նպաստում է սովորողների գիտական աշխարհայացքի, հոգևոր-բարոյական պատկերի, մտավոր ընդունակությունների ու հասարակական վարքի ձևավորմանը: Կրթության բովանդակության կառուցվածքը սահմանվում է կրթության պետական չափորոշիչով, որը ներառում է հանրակրթության ուսումնական բնագավառները և բովանդակային բաղադրիչները, սովորողին ներկայացվող ընդհանրական, որակական պահանջները՝ ըստ ուսումնական բնագավառների և դպրոցի աստիճանների(8, հոդ. 6):

Մայրենիի դասավանդման հիմնական նպատակներից մեկը սովորողների հոգեմտավոր զարգացմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է նրանց հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային հոգևոր ժառանգությանը, իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների ու ստեղծագործությունների գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվության հաստատակամություն, բարեխղճություն և բարոյական այլ հատկանիշներ:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը կրթության բովանդակության հուզական-արժեքային բաղադրատարրի բաղկացուցիչ է, հետևաբար այդ գործընթացի բովանդակային և գործնական կողմերը պետք է լիարժեքորեն արտացոլվեն ուսումնական նյութի մեջ:

«Մայրենի», «Հայոց լեզու և գրականություն» ուսումնական առարկաների դասավանդման հայեցակարգում բացառիկ կարևորություն է հատկացված այդ

առարկաների ուսուցմանը, քանի որ այդ գործընթացում է ձևավորվում հայ ազգային նկարագիրը, այն նպաստում է սովորողների մտքերի, զգացմունքների ու ապրումների արտահայտմանը, տվյալ իրադրության պահանջով և բազմազան ոճերի կիրառմամբ բանավոր ու գրավոր խոսք կազմելու հմտությանը, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու դրանց հետագա մշակմանը:

Ուսումնական ծրագրերի վերլուծությամբ փորձել ենք բացահայտել մայրենիի ուսուցման գործընթացում առաջնային արժեքները: Ծրագրերի արժեքային բովանդակության վերլուծությունն իրականացնելիս բնութագրել ենք լեզվական բնագավառի առարկաներից ուսուցման խնդիրներն ու նպատակները, դասընթացների արժեքային ներուժը:

Մեր տեսական վերլուծությունները, ինչպես նաև ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների հանգամանալից դիտարկումը թույլ են տալիս բացահայտել տվյալ դասընթացի արժեքային ուղղվածությունը: Լեզվական գիտելիքերը, կարողություններն ու հմտությունները մենք դիտարկում ենք որպես իմացական-ճանաչողական արժեքներ, շփման և բարեկիրթ հաղորդակցման ձևավորումը կազմում են սոցիալական արժեքները:

Ուսումնական այն թեմաները, որոնք ձևավորում են գեղագիտական ճաշակ, գեղեցիկի զգացողություն և ընկալում, խոսքի մշակույթ, նպաստում են գեղագիտական արժեքների ձևավորմանը: Դաստիարակչական, խրատական, ճանաչողական նշանակություն ունեցող ստեղծագործությունները, առաջադրանքները նպաստում են բարոյական արժեքների ձևավորմանը:

Մայրենիի ծրագրերում լեզվական-քերականական նյութը՝ հնչյունաբանական, բառակազմական, իմաստաբանական, ձևաբանական և շարահյուսական գիտելիքները, ուսուցանվում են բացատրական ընթերցանության համար նախատեսվող գեղարվեստակա և գիտահանրամատչելի տեքստերի միջոցով:

Ծրագրերի ու դասագրքերի թեմատիկ վերլուծությունը բացահայտում է ուսումնական նյութերի արժեկողմնորոշիչ հետևյալ ուղղվածությունը: Այսպես, օրինակ, իմացական-ճանաչողական, հաղորդակցական, սոցիալական

նշանություն ունեն 2-6-րդ դասարաններում ուսումնական նյութերի հետևյալ թեմատիկ խմբավորումները՝ «Դու մեր դպրո՛ց սիրելի», «Մեր տունը», «Իմ անուշի՛կ Հայաստան» (Մայրենի 2), «Իմ բարձրանուն, իմ քաղցրանուն», «Իմ ընտանիքը», «Լեզուն զենք է, գիտելիքը՝ ուժ», «Մեր երկրորդ տունը», «Մեր հայրենիքի հերոս պաշտպանները» (Մայրենի 3), «Հայրենի երկիր», «Մեր քաղցրաբառ հայոց լեզուն», «Մանուկների մոլորակը» (Մայրենի 4) «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Առակս ինչ կցուցանե» (Մայրենի 5):

Դրանք սեր և հետաքրքրություն են ձևավորում մայրենի լեզվի, ժողովրդի պատմության, մշակույթի նկատմամբ, ձևավորում են ազգային արժեքների ճանաչման և գնահատման կարողություն: Այդ նյութերը միմյանց հետ շփման, բարեկիրթ հաղորդակցման հնարավորություն են ընձեռում, դաստիարակում են բարություն, հոգատարություն, հետաքրքրություն հայրենի եզերքի նկատմամբ, զարգացնում գեղարվեստական մտածողությունը:

Այս տեսանկյունից ծրագրերի բովանդակության մեջ էական տեղ է հատկացվում ստեղծագործական գործունեության զարգացմանը, սոցիալական փորձի հարստացմանը, բնության նկատմամբ հուզական-արժեքային հարաբերությունների ձևավորմանը: Այն արտացոլվում է, օրինակ, «Մարդն իր գործով է ճանաչվում» (Մայրենի 3), «Ում նվիրեմ իմ սիրտը» «Մարդու անունն ու գործը» (Մայրենի 4) թեմատիկ բաժիններն ունեն բարոյախրատական ուղղվածություն, դաստիարակում են ազնվություն, աշխատասիրություն, բարեկրթություն համերաշխություն, նվիրվածություն, գթասրտություն, փոխօգնության պատրաստակամություն և այլն:

Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ Մայրենիի թեմատիկ նյութերն առավելապես ուղղված են հայրենասիրության դաստիարակությանը, մայրենի լեզվի նկատմամբ սիրո և երկյուղածության ձևավորմանը, ընտանիքի անդամների ու մերձավորների նկատմամբ սիրո և նվիրվածության դաստիարակությանը, մասնավորապես 4-րդ դասարանի թեմատիկ նյութերն ունեն խրատական, խոհական աշխարհայացքի ձևավորման ուղղվածություն:

Բարոյական գեղագիտական զգացումների և սոցիալական պատկերացումների համակարգը ձևավորվում է ընթերցանության նյութերի շուրջ

տարվող մեթոդական բազմաբնույթ աշխատանքի և ընթերցանության տարբեր ձևերի շնորհիվ՝ **բացատրական, դերերով, ընտրովի ընթերցանություն, գեղարվեստական ուսմունք, ստեղծագործական վերարտադրության, բնագրի փոփոխմամբ, մանրամասն, համառոտելով, ստեղծագործելով, ընտրովի, դեմքը, ժամանակն ու կառուցվածքը փոփոխելով վերարտադրություն և այլն**:

Արժեկողմնորոշիչ ներուժ ունեն «Իմաստունի զրույցը», «Իմաստունի օրատետրից», «Իմաստունի խորհուրդները», «Տատիկի խորհուրդները», «Ինչուիկի և Գիտունիկի զրույցներն ու նամակները» խորագրերով ներկայացվող զրույցները, ասույթները, խրատ-խուրհուրդները հակիրճ, ճաշակով, պատկերավոր ու արտահայտիչ լեզվով տեղեկատվություն են հաղորդում ազգային խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի, օրենսգրքի, մայրենի լեզվի, էպոսի, խաչքարի, հայոցգրերի, հայրենի բնաշխարհի, առարկայական խորհրդանիշների (լավաշ, մածուն և այլն), կենդանական ու բուսական խորհրդանիշների (խաղող, նուռ, ծիրանենի, աղավնի և այլն), սեր և հոգատարություն են ձևավորում մերձավորների, ուրիշների, կենդանական աշխարհի նկատմամբ, զարգացնում են բարոյական արժեքներ՝ աշխատասիրություն, մաքրասիրություն, հյուրընկալություն, ընթերցասիրություն, սեփական ուժերին ապավինում, ջանասիրություն, խոհեմություն, համեստություն, ճիշտ, բարեկիրթ, արտահայտիչ խոսք, խաղաղասիրություն, հանդուրժողականություն

2.2. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման միջոցների ուղղությամբ իրականացրած հետազոտական աշխատանքի բնութագրումը

Նախորդ գլխում մենք նշել ենք, որ Մայրենիի ուսուցման գործընթացում իրականանում է սովորողների իմացական, սոցիալական, գեղագիտական, բարոյական արժեքների յուրացումը:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորվածության մակարդակի հայտորոշման համար փորձնական դասարաններում ընդգրկված աշակերտներին տրվել են հարցաթերթիկներ, առաջադրանքներ, կատարվել է ճեպահարցում, որոնցում ընդգրկվել են որոշակի արժեքներ: Մինչև հարցաթերթիկների բաժանումը անցկացվել են զրույցներ հարցաշարում ներկայացված արժեքների

իմաստների շուրջ, կատարվել է բացատրական աշխատանք, տրվել են ցուցումներ։Դպրոցականները պետքէ նշեին իրենց նախընտրած արժեքները կամ դրանց վերաբերյալ իրենց կարծիքները: Արժեքներն ընտրելիս աշխատել ենք ընդգրկել դպրոցականի կենսագործունեության, մարդկային հարաբերությունների բոլոր ոլորտները, բարոյական և գեղագիտական պատկերացումներն արտացոլող հասկացություններ: Մեր նպատակն է եղել նաև բացահայտել, թե այս կամ այն արժեքի նախընտրությունն ինչպիսի դրդապատճառներով է թելադրված, գիտակցու՞մ են, արդյոք, տվյալ հասկացության նշանակությունը, թե՞ պատասխանը մեխանիկորեն են գրում:

Հարցումներին մասնակցած սովորողներին առաջարկվել են հետևյալ արժեքները և խնդրվել է ընտրել դրանցից ցանկացածը:

Հարցաշար 1

Առաջին խումբ.

- Աշխատասիրություն,
- Հայրենիք
- Բարեկիրթ վերաբերմունք դպրոցում, տանը, հասարակական վայրերում,
- Պատասխանատվություն,
- Ընկերասիրություն,
- Ուսումնառություն դպրոցում,
- Մեր դեպի մաթեմատիկան,
- Համակարգչային խաղեր,
- Մեր դեպի բնությունը, հոգատարություն կենդանիների նկատմամբ,
- Հաղորդակցում ընտանիքում, հասակակիցների հետ,
- Ազգային խորհրդանիշների իմացություն,
- Կարգապահություն,
- Ճշտախոսություն,
- Ազնվություն,
- Բարձր առաջադիմություն

- Համագործակցություն,
- Հանդուրժողականություն

Երկրորդ խումբ

- Ճշտապահություն,
- Աշխատասիրություն,
- Հայրենասիրություն,
- Սեր մաթեմատիկայի նկատմամբ,
- Հոգատարություն,
- Քաղաքավարություն,
- Այլոց սխալները ներելու կարողություն,
- Մարդասիրություն,
- Կարգապահություն,
- Հանդուրժողականություն,
- Համագործակցություն,
- Բարձր առաջադիմություն,
- Հավատարիմ ընկերներ,
- Հմակարգչային խաղեր:

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ աշակերտների զգալի մասը նախապատվությունը տալիս են **հայրենասիրություն, ազգային խորհրդանիշներ, ազնվություն, ընկերասիրություն, հաղորդակցում, համակարգչային խաղեր արժեքներին**. Նրանց համար կարևոր են նաև **բարձր առաջադիմությունը, հավատարիմ ընկերները, քաղաքավարությունը**: Սովորողները որոշակիորեն նախապատվություն էին տվել բարոյական և սոցիալական արժեքներին՝ բարեկիրթ վերաբերմունք, քաղաքավարություն, ընկերասիրություն, համագործակցություն և այլն: Նաև բացահայտվեց, որ ընդհանուր առմամբ իմացական-ճանաչողական արժեքներն առաջնային չեն. Ակնհայտորեն դպրոցականներից քչերն են նախընտրում **ընթերցանությունը,** բարձր չէին նաև **արվեստի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրասիրությունը,**

համագործակցությունը: Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ տեղեկատվական տեխնոլոգիաների հարաճուն ներդրումներն էականորեն փոխելեն դպրոցականների կենսակերպը՝ միաժամանակ նրանց որոշ չափով մեկուսացնելով գրականությունից, արվեստի հետ շփումից, քանի որ այնպիսի արժեքներ, ինչպիսին են **համագործակցությունն ու հանդուրժողականությունը**, ցանկի վերջին տեղում են: Նրանց կողմից կարևորվում են նաև բարոյական արժեքները՝ **հավատարմությունը, նվիրվածությունը, ազնվությունը, ճշտախոսությունը, ազգային խորհրդանիշների իմացությունը**:

Դա պայմանավորված է նրանով, որ ուսուցման գործընթացում տակավին խորությամբ չեն ներդրվում համագործակցային ուսումնառությանը նպաստող ժամանակակից տեխնոլոգիաներ և փոխներգործուն մեթոդներ, որոնք էական ազդեցություն ունեն սովորողների կենսագործունեության և վարքային դրսևորումների վրա:

Այստեղից բխում է, որ սովորողների կողմից տվյալ ոլորտը բնութագրող արժեքների անտեսումը արդիական է դարձնում ուսուցիչների՝ այդ ուղղությամբ տարվող աշխատանքը:

Այսպիսով, հետազոտական աշխատանքի շրջանակում մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հանրակրթական դպրոցում մայրենիի ուսուցման ընթացքում արժեկողմնորոշիչ գեղարվեստական ստեղծագործությունների, քերականական վարժությունների, ընթերցանության նյութերի և ստեղծագործական առաջադրանքների կիրառումը որոշակիորեն նպաստում է սովորողների արժեհամակարգի և արժեքային կողմնորոշումների ձևավորման արդյունավետության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման, անձի և հասարակության համար դրանց նշանակության գիտակցման հրամայականը պահանջում է հանրակրթական դպրոցում մայրենիի դասավանդման գործընթացում խորապես հաշվի առնել այդ ուսումնական առարկայի արժեքային ներուժը:

2. Մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման միջոցներ են՝ արժեկողմնորոշիչ թեմատիկ նյութերը, թեստերը, ստեղծագործական, նախագծային առաջադրանքները, սահիկահանդեսները, ուսուցողական տեսաֆիլմերը, ինչպես նաև ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները:

3. Մայրենիի ուսուցման գործընթացում արժեկողմնորոշիչ թեմատիկ նյութերի ընտրության և մեթոդական համալիրի մշակման համար պետք է առաջնորդվել արժեքների ընտրության, դասակարգման և խմբավորման սկզբունքներով՝ ըստ սովորողների ուսումնական նպատակների և տարիքային առանձնահատկությունների:

4. Սովորողների արժեքային համակարգի ձևավորվածության չափանիշներն են շրջապատի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, նրանց կողմից մշակութային արժեքների ընկալումն ու իմաստավորումը, իրադրությանը համարժեք հույզերի,դիրքորոշումների և վարքի դրսևորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, - Եր.: Հայաստան, 1976, - 925 էջ:
2. Ասատրյան Լ. Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան, Արտագերս, 2009, 335 էջ:
3. Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ, Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017, 360 էջ:
4. Բարոյագիտական բառարան (Խմբ. Ի.Ս. Կոնի), - Եր.: Հայաստան, 1985, - 455 էջ:
5. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ,- Եր.: Ան-Ջոն, 2011, -160 էջ:
6. Համագործակցային ուսուցում /Հովհաննիսյան Ա. և ուրիշներ/, Եր.: Անտարես, 2006.-123 էջ:
7. Հայոց լեզու, գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: - Եր.: Անտարես , 2006, -148 էջ:
8. Միքայելյան Հ. Ս., Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը.- Եր.: ԷդիթՊրինտ, 2011, -184 էջ:
9. Նալչաջյան Ա. Ս., Հոգեբանական բառարան, - Եր.: Լույս, 1984, - 237 էջ:
10. Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա (կրթակարգ չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր, նոր մեթոդներ), - Եր.: ԿԱԻհր., 2006, - 148 էջ:
11. Փիլիսոփայական բառարան, - Եր.: Հայաստան, 1975, - 467 էջ:7
12. Артюхов И. С. Ценностии воспитание /И.С. Артюхова // Педагогика.-1999.-N 4. - С. 117-121.
13. Архангельский Л. М. Ценностные ориентации и нравственное развитие личности. - М.: Знание, 1978. - 64с.

14. Каган М. С. Философская теория ценности/ М.С. Каган.-СПб.: Петрополис, 1997.-205 с.
15. Леонтьев А. Н. Ценностные представления в индивидуальном и групповой сознании: виды, детерминантыиизмененияввовремени / Психологическое обозрение, 1998 ,N1. С. 13-25
16. Маслов С. И. Эмоционально-ценностноеобразование младших школьников /С.И. Маслов.-Тула, Изд-воТГПУим. Л.Н. Толстого, 1999.-130 с.
17. Розов Н. С. Ценности гуманитарного образования // Высшее образование вРоссии. – 1996. - N1. – С. 85-89.
18. Российская педагогическая энциклопедия: В 2 тт. /Гл. ред. ВВ. Давыдов. -М.: Большая Российская энциклопедия, 1999.-Т.2.-672 с.
19. Сластенин В.А., Чижакова Г.И., Введение в педагогическую аксиологию, Москва, ACADEMA, 2003, -192 с.